

**ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ
ԱՐԴԻ ԻՐԱՆՈՒՄ**

Իրանի Իսլամական Հանրապետության Սպահանի համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնը հիմնադրվել է 1959–60 թ. (1338 թ.) իրանահայերի ջանքերով¹: Ամբիոնը հանդես է եկել որպես Միջին Արևելքի և տարածաշրջանի միակ հայագիտական ամբիոն, որը գործում է առ այսօր:

Ամբիոնը առաջին շրջանի ընդունելության քննություններով իր աշխատանքը սկսել է 14 հայ ուսանողներով: Ամբիոնի առաջին շրջանի դասավանդման առարկաներն են եղել հայոց լեզու, գրաբար, գրականության պատմություն, պատմություն, թարգմանություն, տրամաբանություն, պարսկերեն և անգլերեն²:

Ամբիոնի հիմնադրմանը իրենց նպաստն են բերել հայկական առաջնորդարանը, միությունները և «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամը: 1970 թ. «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամը ամբիոնին հատկացրել է 25 000 դոլար՝ մասնավոր շենք կառուցելու համար: Օգնությունը շարունակվել է հետագայում ևս: 1972 թ. մայիսի 8-ին տեղի է ունեցել հայագիտական շենքի պաշտոնական բացումը, որը կառուցվել է Սպահանի համալսարանի արևմտյան տարածքում՝ ճարտարապետական հատուկ հորինվածքով: Ներկայումս ամբիոնի գրադարանը պարունակում է 4 000 մասնագիտական գիրք, սակայն խիստ պակաս է զգում ՀՀ-ում հրատարակված ժամանակակից գիտահետազոտական հանդեսների, ամսագրերի և գրքերի:

Ամբիոնի նկատմամբ, իր հիմնադրման առաջին իսկ օրերից, անտարբեր չի եղել պարսիկ երիտասարդությունը, որը եղել է ճյուղի ուսանողների որոշ մասը: Իսկ վերջին տասնամյակներին պարսիկ ուսանողները մեծ թիվ են կազմում, մինչդեռ հայ ուսանողների թիվը նվազել է: Հարկ է նշել, որ հայ ուսանողների ընդունման համար Համալսարանը, դիմելով նախարարությանը, պահանջել է որոշ լրացուցիչ տեղեր և արտոնություններ:

Ուսանողների ընդունելության վճարովի կարգի ներդրման պատճառով վերջին տարիներին ամբիոնը կանգնած էր մեծ խնդրի առջև, որի հետևանքով դժվարությամբ էր կարողանում պահպանել իր գոյությունը: 2006 թ. ամբիոնի վարիչ՝ դոկտոր Մ. Մալեք Մոհամմադիի ջանքերով ու համալսարանի ղեկավարների բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ խնդիրը լուծվեց և ուսանողների ընդունելության վճարովի կարգը փոխվեց անվճարի: Ներկայումս ընդունելության կենտ-

¹ Հողվածի հեղինակն այս ամբիոնի վարիչն է (ՆԱԲ.):

² ԻհՀ Սպահանի համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի մասին ավելի մանրամասն տե՛ս՝

میناسیان، لئون تاریخ ارمینان جلفای اصفهان در یکصد و چهل سال اخیر (1856-1996)، جلفای اصفهان (1383).

րոնացված քննություններով տարեկան ընդունվում են 30–35 ուսանող, որոնց գերակշիռ մասը ազգությամբ պարսիկ են:

Վերջին տասնամյակների ընթացքում հայ-իրանական հարաբերությունները մեծ վերելք են ապրել տարբեր բնագավառներում: 2009 թ. Հայաստանի Հանրապետության նախագահ պրն Սերժ Սարգսյանի և նրա գլխավորած բարձրաստիճան պատվիրակության այցը ԻԻՀ նշանակալի դեր կատարեց երկկողմ հարաբերությունների սերտացման ու զարգացման համար:

Այսօրվա դրությամբ և ժամանակակից աշխարհի թելադրանքով գիտությունը և գիտահետազոտական գործունեությունը կենսունակ և ռազմավարական դեր են կատարում ցանկացած ասպարեզում: Չնայած երկու երկրների բարձրագույն կրթության և գիտության նախարարների երկկողմ ստորագրած գիտահետազոտական համագործակցության համաձայնագրերի և կողմերի գիտահետազոտական բարձր կարողությունների, գիտական համագործակցությունը պատշաճ ձևով չի իրականացվում: Եթե քաղաքական, մշակութային, տնտեսական և էներգետիկ բնագավառներում փոքր ի շատե նկատվում է որոշակի դրական առաջընթաց, ապա համատեղ գիտահետազոտական ծրագրերի իրականացումը հարաձուլն պահանջներին չի բավարարում:

Ինչ վերաբերում է հայագիտության և հայերենագիտության զարգացմանը, ապա որոշ քայլեր ձեռնարկել ենք, որպեսզի Իրանում հայագիտական տարբեր առարկաներ արժանանան պատշաճ ճանաչման: Ամբիոնը մինչև 2005 թ. զբաղվել է զուտ ուսանողների ուսումնական գործունեությամբ՝ ճյուղի բակալավրիատի ուսումնաշրջանի առարկաների դասավանդմամբ: Սույն թվականից սկսած և ամբիոնի աշխատանքների աշխուժացումից հետո, հետամուտ եղանք համալսարանական հիմնական առաքելությունը՝ գիտահետազոտական գործունեությունը և փորձեցինք նոր ուժ ու ազդակ հաղորդել հիսնամյա ամբիոնի գործունեությանը:

Համաշխարհային ներկա գիտական ասպարեզում գործուն մասնակցելու, նաև հայագիտական և իրանագիտական տարբեր հարցերի կարևորությունը նշելու և շեշտելու համար ամբիոնի գիտահետազոտական գործունեությունը կենտրոնացվեց երկու բնագավառներում՝ կազմակերպել միջազգային գիտաժողովներ, իսկ ամբիոնում բակալավրիատին զուգահեռ հիմնել մագիստրատուրայի ու ասպիրանտուրայի ուսումնառություն և շեշտը դնել գիտահետազոտական աշխատանքի վրա: Սույն նպատակով գործունեությունը ծավալվել է երեք հիմնական ուղղություններով.

1. Կազմակերպվել են հայագիտական երկու գիտաժողովներ.

ա. Գրական-մշակութային կամուրջ Հայաստանի և Իրանի միջև, գիտաժողով, ԻԻՀ Սպահանի համալսարան, 2006 թ.:

բ. Հայագիտական և իրանագիտական առաջին միջազգային գիտաժողով, 2008 թ. 10-11 նոյեմբերի:

2. Մշակվել է հայագիտության մագիստրատուրայի ամբողջական ծրագիրը, որը դեռևս չի իրագործվել:

3. Վերանայվել են բակալավրիատի ուսումնական առարկաների ավանդական նյութերը:

Հիշյալ գերնպատակների ուղղությամբ, ինչպես նշվեց, 2006 թ. Սպահանի համալսարանի հայոց լեզվի և գրականության և պատմության ամբիոնների, ինչպես նաև ԻԻՀ մշակութային և իսլամական հարաբերությունների հաստատության պարսից լեզվի և գրականության զարգացման կենտրոնի համագործակցությամբ կազմակերպվեց «Գրական-մշակութային կամուրջ Իրանի և Հայաստանի միջև» երկրորդ գիտաժողովը Սպահանի համալսարանում, որին մասնակցեցին ՀՀ գրողների միության նախագահը և նրա գործընկերները, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրենը, Հայոց մշակույթի զարգացման հիմնադրամի տնօրենը, «ՍՕՔՍ»-ի պատասխանատու տնօրենը, «Հր. Աճառյան» համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դեկանը, «Միհր» ամսագրի գլխավոր խմբագիրը և ուրիշ հայ ու պարսիկ գիտնականներ, ինչը ցույց է տալիս հայ-իրանական բազմակողմանի և սերտ հարաբերությունները:

Գիտաժողովում հայերենով ելույթ է ունեցել դոկտ. Մ. Մալեք-Մոհամմադին, որն իր ելույթը սկսել է հետևյալ խոսքերով. «Մ. Մոհամմադ մարգարեի անվամբ զարդարված տարում պատիվ ունենք հյուրընկալելու մեր վաղեմի բարեկամ, ՀՀ - վաստակաշատ գիտնականներին և գրողների միության անդամներին իսլամական աշխարհի մշակութային մայրաքաղաքում՝ Սպահանի համալսարանում և հայոց լեզվի ու գրականության 47-ամյա ամբիոնում: Հուսանք, որ նման համագործակցությունների արդյունքներն ու ձեռքբերումները ազդեցիկ քայլեր կհամարվեն քաղակալրթությունների և միաստվածային կրոնների երկխոսության բնագավառում»³: ՀՀ Գրողների միության նախագահ հարգարժան պրոֆ. Լևոն Անանյանը, գիտաժողովի բացման ելույթում շեշտել է հնագույն երկու քաղաքակրթությունների բազմակողմանի և փոխշահավետ համագործակցությունները. «Իրանը և Հայաստանը, որպես հնագույն քաղաքակրթության երկու հարևան օրրաններ, անցել են պատմական ընդհանուր ու միատեղ ճանապարհ և այսօր էլ հանդես են գալիս որպես իրենց ժողովուրդների ապագան միասնական ջանքերով կերտող ուղեկիցներ: Յուրաքանչյուր անցնող տարվա հետ նոր էջ է բացվում Իրան-Հայաստան հարաբերությունների հարուստ պատմության մեջ: Հասկապես այս վերջին տասնամյակը մեր սերնդի համար լի էր հիշարժան իրադարձություններով: Հայաստանի անկախացման և երկրաշարժին հաջորդած տարիներին Իրանի կողմից ցուցաբերված միակողմանի օժանդակությունները վերածվեցին երկու երկրների միջև բազմակողմանի և փոխշահավետ համագործակցության: Այս առիթով ես հասկապես ուզում եմ կարևորել Իրանի և Հայաստանի գրական և մշակութային կենտրոնների գործունեությունը, որոնց ջանքերի միջոցով ընդլայնվել և ամրապնդվել են մշակութային հարաբերությունները՝ վերածվելով բարեկամության և սերտ մարդկային համագործակցության»⁴:

Գիտաժողովում ելույթ են ունեցել ինչպես ԻԻՀ Սպահանի համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները (ինչը վկայում է հայագիտական թեմաների նկատմամբ իրանցի պատմաբանների և բանասերների հե-

³ «Գրական-մշակութային կամուրջ Հայաստանի և Իրանի միջև» երկրորդ գիտաժողովի ներկայացված հոդվածների ամփոփումների ժողովածու, գլխավոր խմբագիր՝ Մ. Մալեք Մոհամմադին, ԻԻՀ Սպահանի համալսարան, 2006, էջ 1:

⁴ Նույն տեղում, էջ 2:

տաքրքրության մասին), այնպես էլ ՀՀ գիտական և մշակութային հիմնարկությունների ներկայացուցիչները հայ-իրանական բազմաբնույթ թեմաների մասին: Ուշադրության արժանի են նաև իրանահայ համայնքի ներկայացուցիչների աժեքավոր ելույթները⁵:

2008 թ. նոյեմբերի 10-ին ԻԻՀ Սպահանի համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի կազմակերպած «Հայագիտական և իրանագիտական առաջին միջազգային գիտաժողովը» սկսվել է գիտաժողովի գիտխորհրդի նախագահի՝ դոկտոր Մ. Մալեք Մոհամմադիի զեկուցմամբ, որը հետևյալ խոսքերով շեշտել է հայ-իրանական բարեկամական դարավոր հարաբերությունները և հայագիտության թեմայի կարևորությունը, հատկապես իրանագիտության բնագավառում. «Հանուն Բարեգութ և Ողորմած Աստծո: Քանի որ քրիստոնեությունը իսլամին ամենամոտ կրոնն է, ուստի խոսքերս սկսում եմ ս. Ղորանի մի այլևի մեջբերումով, որտեղ ասվում է. «...Անկասկած մուսուլման հավատացյալներին ամենամոտ մարդիկ նրանք են, ովքեր իրենց քրիստոնյա են կոչում: Քանզի նրանցից ոմանք խոնարհ ու հեզ իմաստուններ և հոգևոր հայրեր են» (Ալ Մաեդա 5-րդ գ., 82-րդ ա., էջ 108): Փառք Բարձրյալին, որը մեզ շնորհեց կարողություն կազմակերպելու «Հայագիտական և իրանագիտական առաջին միջազգային գիտաժողովը»:

Իրանի իսլամական հեղափոխության մեծ առաջնորդ Այաթոլլահ Խամենեին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինի հետ հանդիպման ժամանակ հաստատել է իրանահայերի նկատմամբ ունեցած իր մտերիմ և սիրալիր վերաբերմունքը և նշել. «Մենք սիրում ենք քրիստոնյաներին և նրանց հանդեպ ունենք սեր ու հարգանք: Հայերը թե՛ հեղափոխության և թե՛ Իրանին պարտադրված պատերազմի ընթացքում կանգնել են իրենց մահմեդական հայրենակիցների թիկունքին: Եվ ես անձամբ վկա եմ եղել, թե հայերը ինչպես են իրենց բոլոր հնարավորությունները ներդրել ռազմաճակատում: Եվ իրենց հայրենակիցների կողքին

⁵ Ստորև ներկայացնում ենք զեկուցումների ցանկը. Լևոն Անանյան (Հայաստանի գրողների միության նախագահ)՝ «ԻԻՀ-ՀՀ մշակութային և գրական առնչությունները», դոկ. Մոհամմադ Մալեք Մոհամմադի (Սպահանի Համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոն)՝ «Ս. Ղուրանը և քրիստոնյաները», Մորթեգա Դեհլաննեժադ (Սպահանի համալսարանի պատմության ֆակուլտետ)՝ «Հայերը և Իրանի սահմանադրական հեղափոխությունը», դոկտ. պրոֆ. Լավրենտի Հովհաննիսյան (ՀՀ ԳԱԱ հայոց լեզվի ինստիտուտի տնօրեն)՝ «Իրանական փոխառությունները գրաբարում», դոկտ. Սեյդ Ասդար Մահմուդաբադի (Սպահանի համալսարանի պատմության ֆակուլտետ)՝ «Մասանյան բանակի ներկայությունը Ավարայրի ճակատամարտում և դրա հետևանքները», դոկտ. Ֆերեյդուն Ալլահյարի (Սպահանի համալսարան)՝ «Հայաստանի դերը Մասանյան թագավորության քաղաքականության համատեքստում մ. թ. 3-րդ դարում», Ջավեն Դուկասյան՝ «Հայերը իրանական կինոյում», դոկտ. Ալի Աբբաս Բաջրաֆ (Սպահանի համալսարանի պատմության ֆակուլտետ)՝ «Հայերի տեղն ու դերը Սեֆյանների շրջանում», Սեյյեդ Դուլամոեզա Դավազդահեմամի՝ «Հայերին և Սպահանին վերաբերող պատմական մի փաստաթղթի քննությունը», դոկտ. Բարաթի (Սպահանի համալսարանի պատմության ֆակուլտետ)՝ «Իրանի և հայոց տիկինը Նեզամու հայացքով», Մահդի Ջաֆար Ջադեհ, դոկ. Մոհամմադ Մալեք Մոհամմադի (Սպահանի համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոն)՝ «Եզնիկ Կողբացու փիլիսոփայական հայացքները և հին իրանցիների գրվածապաշտության հարցի ուսումնասիրությունը», դոկտ. Անդրանիկ Միմոնյան (Թեհրանի Ազատ համալսարան)՝ «Իրանը քաներոդ դարի հայ բանաստեղծության մեջ», դոկտ. Մոհամմադ Ալի Չելունգյար (Սպահանի համալսարանի պատմության ֆակուլտետ)՝ «Հայերի վիճակը Սեֆյան հարստության քայքայման և անկման շրջանում մինչև Ղաջարների իշխանության ձևավորումը»:

պաշտպանել են իրենց հողն ու տունը թշնամուց: Հայերը Իրանի Իսլամական Հանրապետությունում մեզ համար օտար և խորթ չեն և նրանք իրանական մեծ ընտանիքի մի մասն են կազմում»⁶:

Իրանցիների և հայերի հասարակական-տնտեսական, քաղաքական ու պատմական հարաբերությունները դարերի պատմություն ունեն, և մինչև օրս էլ երկու ժողովուրդների բազմադարյա բարեկամությունը հաստատուն և շարունակական է: Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության բազմակողմանի հարաբերությունների ընդլայնումն ու վերջին տասնամյակներում երկու երկրների միջազգային շահերի ընդհանրությունն ավելացրել է հիշատակված բնագավառների գիտահետազոտական ուսումնասիրության անհրաժեշտությունը: Նկատի ունենալով երկու երկրների համալսարանների ու գիտահետազոտական կենտրոնների կարողությունը, մեծ ներուժ կա համագործակցելու իրանագիտության, հայագիտության, հնագիտության, աստղագիտության և ֆիզիկայի բնագավառներում:

Հայկական սկզբնաղբյուրները հայ պատմական և մշակութային իրադարձություններից զատ անգնահատելի աղբյուր են նաև հարևան ազգերի քաղաքակրթությունների, մասնավորապես Իրանի վերաբերյալ: Այդ սկզբնաղբյուրներից շատերը եզակի դեր ունեն հին Իրանի պատմության որոշ կողմերի վերականգնման ու վերաճանաչման գործում և անգնահատելի աղբյուր են իրանական լեզուների ու իրանագիտության համար:

«Իրականում հայագիտության և իրանագիտության թեմանները հայերի և իրանցիների պես միջտ կապված են եղել իրար հետ: Հայագիտության և իրանագիտության համընդհանուր թեմաների տարածվածությունը հրամայական է դարձնում հետազոտական ակտիվ և գործունյա համակարգի ստեղծումը: Այդ նպատակով Մպահանի համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնը, բակալավրիատի գիտական աստիճանում իր հիսնամյա գիտական փորձով, օրակարգում է դրել հայագիտության և իրանագիտության բնագավառներում մասնագիտական հետազոտությունների խնդիրը: Այս ուղղությամբ ամբիոնի գլխավոր նպատակներից է հայագիտության մագիստրատուրայի հիմնադրումը և համագործակցությունը պատմության, աշխարհագրության և քաղաքագիտության ամբիոնների հետ...»⁷:

⁶ Իրանի իսլամական հեղափոխության մեծ առաջնորդ Այաթոլլահ Խամենեյի պաշտոնական էջը համացանցում. <http://www.leader.ir/langs/fa/index.php?p=bayanatArchive>

⁷ Հայագիտական և իրանագիտական առաջին միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, գլխ. խմբ. Մ. Մալեք Մոհամմադի, ԻԻՀ Մպահանի համալսարան, 2008, էջ 10: Ստորև ներկայացնում ենք 2008 թ. կայացած Հայագիտական և իրանագիտական միջազգային առաջին գիտաժողովի զեկուցումների ցանկը.

Dr. Seyyed Reza Soleiman Zadeh Najafi. Restoring to Principles of Unity among Religions , the Secret of Survival, Dr. Mahmoud Jaafari-Dehaghi. The Iranian and Armenian Sacred Girdle, Մոհամմադ Մալեք Մոհամմադի-Աֆսանե Շիրանի՝ «Մ. Հիսուս Քրիստոսի և առաքյալների պատկերը ս. Ղորանի տեսանկյունից», Dr. Mohammad Khaqani-Dr. Touraj Zeynivand. Islam and Christianity in Khaqani Shervani's Poetry, դոկտոր Մոհամմադ Մալեք Մոհամմադի՝ «Հինգերորդ դարի հայերեն սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը իրանագիտության բնագավառում», Prof. Dr. John A. C. Greppin. Middle Persian Nominal Suffixes in Classical Armenian, դոկտ., պրոֆ. Պարույր Մուրադյան՝ «Պարսկերեն եզակի

Հայագիտության մագիստրատուրայի և ասպիրանտուրայի գիտական շրջանների ստեղծումը ԻԻՀ-ում կարևոր քայլ կլինի թեկնածուական գիտական ատենախոսությունների և աշխատանքների պատրաստման ու հայագիտության զարգացման համար: Հարցը կրկնակի կարևորություն է ստանում հատկապես հայ և իրանական համեմատական թեմաների հետազոտման առումով:

Իրանցի գիտնականները, պատմաբանները և բանասերները, տեղյակ լինելով հայկական սկզբնաղբյուրների ու հայագիտության կարևորությանը, առավելապես միջնորդ լեզվի, մեծ մասամբ անգլերենի միջոցով տեղեկացել են հայկական աղբյուրների բովանդակությանը:

Ինչպես նշվեց, վերջին երկու տարիների ընթացքում մեր գերնպատակն է եղել Իրանում հայագիտության զարգացումն ու այս ուղղությամբ հիմնադրել հայագիտության մագիստրոսական և ասպիրանտական ուսուցումը:

Կայանալիք հայագիտական մագիստրատուրայի շրջանի համար նախատեսված առարկաներն են. 1. Հայոց լեզու, ձևաբանություն, 2. Հայոց լեզու, շարահյուսություն, 3. Հայոց լեզվի գրականության համառոտ պատմություն, 4. Հայոց լեզվի զարգացման փուլերը, հայոց լեզվի կապը իրանական լեզուների հետ, 5. Հայերեն-պարսկերեն մամուլի թարգմանություն, 6. Հայկական սկզբնաղբյուրները Իրանի մասին, 7. Հայ-իրանական

տերմիններ Թամար թագուհու երկրորդ պատմության բնագրում», Theo Maarten Van Lint. Medieval Armenian and Persian Poetry: the Case of Kostandin Erznkac'i, Kevork Baedakjian. Observations on Armenian-Persian Literary Relations in the Late Medieval Period, Dr. Emilia Nercissians, Dr. Caro Lucas. Harnessing Knowledge, Dr. Emilia Nercissians. Against All Odds, Arman Manaserian. Iranian Lyric Tales in the Armenian Folklore, Hamid Reza Rezavand. A Study of the Role of Armenian Language in Borrowings of the Old Georgian Language from the Middle Iranian Languages, Հայկանուշ Մեսրոպյան՝ «Պարսկահայ խոսվածքների լեզվաշխարհագրական բնութագիրը և բարբառախոսների տեղաշարժը», Բարկեն Հարությունյան՝ «Երանշահի (Մասանյան Պարսկաստանի) Քուստի Կապկոնի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի, Ֆ. Տեր-Մարտիրոսով՝ «Հայաստանն Աքեմենյան կայսրության կազմում», Dr. Ali Akbar Kajbaf- Zohreh Ghadiri. The Government of Armenian Ashkanian (from 53 to 220 A.D.), Safoura Tork Ladani. Commercial Exchanges of Armenians in Safavid Period from the Viewpoint of European Tourists, Ali Boroni. An Introduction to Religious and Financial State of Aramns of Isfahan in Safavid Period, Dr. Ali Kavani. The Role and Situation of Armenians in Iran from 1604–1804 with Emphasize on Trade, Dr. Harsij Hossien-Tuiserkani Mojtaba. New Multilateralism as a Foundation of Iran and Armenia's Relationship Expansion, Dr. Vosoughi Saeed-Maasomi Sayed Davood. Role of Regional and Trans Regional Powers in Karabagh Crisis and its Impact on Iran Armenia Relations, Գոհար Բսկանդարյան՝ «Հայ-իրանական Հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո», Հրանտ Խաչիկյան՝ «Մարդ-թռչնի կերպարը հին Իրանի կիրառական արվեստում», դոկտ., պրոֆ. Լիլիթ Երնջակյան՝ «Հայ-իրանական փոխառնությունները ավանդական երաժշտարվեստում», Prof. Dr. Levon Chookaszian. Armenian-Iranian Artistic Relation in the Legacy of Toros Roslin (13th century), Լիլիթ Միքայելյան՝ «Հայաստանի վաղ քրիստոնեական արվեստը և սասանյան մշակույթը. ճարտարապետական առնչությունների հարցի շուրջ», Զարուհի Հակոբյան՝ «Հեծյալի կերպարը միջնադարյան հայ արվեստում. հայ-պարսկական պատկերագրական առնչությունների խնդիրը», Աննա Խեչոյան, Բորիս Գասպարյան՝ «Գեղարվեստապատկերային մտածելակերպի արտահայտման միջոցները ժայռարվեստում», Էսթեր Խեմչյան՝ «Շահ Աբասի կերպարը հայ վիպական բանաբանության մեջ», Սվետլանա Պոդոպյան՝ «Միջերկրիկական փոխառություններ ավանդական տարազի և ուստետի համակարգում», Նելլի Խաչատրյան-Փալադիան՝ «XVII–XIX դարերի հայկական և իրանական արվեստ (ազդեցություններ և ընդհանուր եզրեր)»:

գրական առնչությունները, 8. ՀՀ շրջանային կարողությունները (քաղաքական, գյուղական և շրջանային), 9. Հայաստանի քաղաքակրթության պատմությունը և նրա կապը Իրանի հետ, 10. ՀՀ քաղաքական, հասարակական և մշակութային զարգացումները, 11. ԻԻՀ պատմաքաղաքական հարաբերությունները ՀՀ և կովկասյան տարածաշրջանի երկրների հետ (սկզբից մինչև Սեֆյանները), 12. ԻԻՀ պատմաքաղաքական հարաբերությունները ՀՀ և կովկասյան տարածաշրջանի երկրների հետ (Սեֆյաններից մինչև այժմ), 13. Հայկական սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը և քննարկումը, 14. Հայ բանահյուսությունը, 15. ՀՀ ընդհանուր աշխարհագրությունը, 16. Հայաստանի պատմական հասարակագիտությունը, 17. Պետականությունը և քաղաքականությունը Հայաստանում և Կովկասում:

Մագիստրական վերոհիշյալ ծրագիրը պատրաստվել է ԻԻՀ-ում հայագիտության գիտահետազոտական զարգացման և դասավանդման բարեփոխումների ուղղությամբ: Ծրագրի հիմնական նպատակն է պատրաստել գործունյա և հմուտ մասնագետներ:

Հատկանշական է, որ հայագիտության զարգացումը ԻԻՀ-ում պահանջում է նաև ՀՀ և ԻԻՀ համապատասխան պետական հիմնարկությունների ուշադրությունը⁸: Դիմում ենք նաև ՀՀ հարգարժան գիտնականներին ու խնդրում իրենց գիտահետազոտական համագործակցության առաջարկներով, ծրագրերով և գաղափարներով նպաստել հայ-իրանական գիտական համագործակցությանը:

Մեր առաջադիր խնդիրներից են.

1. ՀՀ ԳԱԱ-ի, ԵՊՀ-ի և գիտական ուրիշ հիմնարկությունների գիտական հանդեսների, պարբերականների ու նոր հրատարակված գրքերի ձեռքբերումը:

2. Խիստ ցանկալի է հայ և ռուս բանասերների պարբերական այցելությունը՝ դասախոսների գործուղմամբ և փոխանակման սկզբունքով:

3. Ուսանողների վերապատրաստման կարճատև ծրագրերի կազմում:

4. ԻԻՀ և ՀՀ գիտական համագործակցությունների համաձայնագրի իրականացում:

5. Երկկողմ մասնագիտական աշխատանքային խմբերի ստեղծում՝ գիտահետազոտական մասնագիտական ծրագրեր մշակելու համար:

6. Չնայած հայ հնամյա գաղթօջախի գոյությանը ԻԻՀ-ում և հայագիտական ամբիոնի առկայությանը, չեն կատարվել երկու հարևան և բարեկամ երկրների գիտնականների հանդիպումներ և այցելություններ: Կարևոր է նաև ՀՀ ԳԱԱ և մայր բունի ուշադրությունը այս կապակցությամբ:

ՄՈՀԱՄՄԱԴ ՄԱԼԵՔ ՄՈՀԱՄՄԱԴԻ (Սպահան)

⁸ 2005 թ. ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան պրն Կարեն Նազարյանի այցը Սպահանի համալսարան, և նրա հանդիպումը Համալսարանի ղեկավարների հետ ազդեցիկ դեր ունեցավ հայագիտության ամբիոնի աշխատանքի վերականգնման համար, ինչը պահանջում է հետևողական մոտեցում: